



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 24

— ՏՈՐԱՐԱՐ —

11 ՅՈՒՆԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղր.	Տարեկան	54 Ղր.	Տարեկան	12 Ձր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձիարայ Պեյ խանիկն տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՈՅ անունը կեղծող կարգ մը նորեկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրչին :

ՍԱՐԳԻՍՈՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :

Հասր 40 փարսի

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ԶԻՅԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի Գաւառի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|---------|--|
| ՌԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱՏԱՆ | (1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՒՏԱՐ | Չարշը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեւեր գաւառներու բոլոր ֆաղսֆնարու մեջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւղօղլուի տունը :

ՑԷՆԻՔԱՆ ՕՐԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇԱՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՄ. 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ.

ԿԵՄԵՐԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

- ՑԷՆԻՔԱՆ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
- ՑԷՆԻՔԱՆ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կսնքի վրայ:
- ՑԷՆԻՔԱՆ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողենաւի՝ եւ առողջատանաւի վրայ:

Ընկերութեան դրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլս, Ալեանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերութիւնն կ'ընդունի ի դաւառա պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր Երկալագուցիլ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՆ 24

ՇԱԲԱԹ

11 Յունիս 1905

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական նօթք (պոսոյիս առքիւ) . (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Բանաստեղծութիւնք . — ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ : Վասնուրիւն (Ոսանաւոր) . — Ս. ԽԱ. ՉՈՒՆԻ : Դրական պուլիս . — ԵՐ. Մ. ՃԻԻԼԷՐԵԱՆ : Պարեգիս երգք . — ՅՈՎ. Հ. Դ. ՊՕԶՄԱՆԱՆ : Նշանածներու կեանքն . — ԼԻԼԱ : Պարստեհներու պատասխանք . — Օ. ԱՄԻՐԵԱՆ : Մամիկիս տպրակն . — Ա. ԿՏԱԻՃԵԱՆ : Երգեհոնք (Ոսանաւոր) . ԱՐՇԱԿ ԻՍՊԷՂԵՐԵԱՆ : 10,000 Տարի Սառնակոյի մը մեջ . (Հանրագիտակի՛ր քերթօնք)
LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԷՐ-ՅԱՆՈՒԲԵԱՆ :

ԿՐԹԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՊՏՈՅՏԻՍ ԱՌԹԻԻ

Երկու օրուան մէջ կարելի եղաւ ինձ առողջ դադարաւ մը կազմելու . Ատա-
րադարի կրթական վիճակին վրայօք , երբ զրօսական պտոյտ մը կատարեալ հա-
մար հող կը գտնուէի :

Ատաբազարի մէջ տեղացի ժողովարդը , որչափ կրցայ մօտէն ուսումնասիրել ,
առք վերաբերում մը ունի իր գպրոցին և եկեղեցիին հանդէպ , այնպէս որ բո-
լոր տեղացիք առիթ մը կը փնտռեն իրենց կրթական դօրծին վրայ ի օտելու . քըն-
նադատեալ համար :

Քաղաքը ունի չորս եկեղեցի իր յարակից վաշտարաններովը , որ կ'ուսու-
նին 2000 է աւելի երկսեռ աղաք :

Հոս չպիտի խօսիմ այդ անշատ եկեղեցիներու վրայ , այլ պիտի ծանրանամ
վարժարաններու և անոնց ներքին կազմաթեան վրայ . Եւ որովհետեւ ամենէն
ուշագրաւ դպրոցը Ս. Հրեշտակապետինն էր , դէժ ինձ այնպէս թախցաւ , հոս
անցողակի յիշենք միայն անոր վիճակը :

Խաբխուլ շէնք մը , թերեւս նախկին պեօճեկիի մը կրնաք ըսել այն հաս-
տատութեան օրուն անյարմար սրահներուն , սենեակներուն մէջ խնդուած են
պղտիկները , բոլորն ալ վատոյժ , դեղնած ու նիհար :

Գրասեղանները մատի վրայ կը համարեն հաս, և գրեթէ հին վարպետ առաջնորդները կը խոսեն ժամերը կայուն խեղճ պլանները գեանի առաջնորդներուն վրայ ծախսարարի կծկում, բոկոսն և գրեթէ քարվարի պարտադրեալ:

Աղտակաւթիւնը ծայր առաւելանին հասած է, շէնքին գունէն մինչև վերի սրահները:

Ուսուցչական մարմինը, բացի մէկ քանի բանիբուն տնտեսներէ՝ բոլորն ալ տկար և վարժապետէ գուրս ամէն բանի նմանող անհատներէ կազմուած է, որոնց խնամքին յանձնուած են այդ միջինիները:

Տեսուչը Մատթէոս Եփէնտի, որ Պոլիսէն բերուած ու կոչուած է այդ փափուկ սրահներին, շուտով մնացած է գործընթացին վիճակին անկերպարանութեան հանդէպ, և խեղճը չդիտելու ինչ ձև, ինչ ուղղութիւն տայ գործին, որպէս զի կարող ըլլայ իր սրահները շարունակել նոյն այդ լարիւրութեան մէջ:

Որչափ որ կրցի կռահել, Հրեշտակապետ թաղին վարժարանը նախորդ ուսուցիչներուն, տեսուչին և կոստակցութեան քմահաճոյքներուն նշանակ՝ ամենէն ուղղութիւն հաստատութիւնն է գիւղաքաղաքին մէջ: Հոգարարութիւնը գործին անդիտակ կոյր հետեւող մը դարձած է արտաքին կարծիքներու, առանց ինքնուրոյն համոզման և անօրինութեան մը:

Օրուան տեսուչը, որուն գոյութիւնը իր հակառակորդներուն փոքր ցու կը պատճառէ, հակառակ իր բանիբուն կարողութեան և ջանքերուն, մինչև այսօր չէ կրցած իր խօսքը, իր սխալները մոյնել վարժարանին մէջ, և գործը մնացած է իր նախորդ անկերպարան վիճակին մէջ:

Գալով նոյն թաղին մանկապարտէզին, որտեղ Եփէնտի խոստովանելու թէ, անիկայ ի վիճակի է մրցելու Պօլոյ Էն առաջնակարգ մանկապարտէզներու հետ, չհորհիւ Տիկին Տիգրանուհի Ստեփանեանի, որուն կարողութիւնը կը ցոլայ պլանիներու վարժարանութեան, ճարպիկ շարժումներուն և առաջ վիճակին վրայ:

Մանկապարտէզը որ յատուկ շէնք մընէ, օգտուան ընդարձակ և մաքուր, ունի 70 է աւելի ծաղիկներ և կոկոններ, ունի օգնական մանկապարտիկներու հիններ, որոնք ուղիւղով կը հսկեն աղայոց վրայ:

Այս սղարները բոլորն ալ վճարողներ են, մաքուր և կոկիկ հագուած, և որոնց տեսքը անգամ մ'ալ կը շեշտէ սա ճշմարտութիւնը թէ՝ սե է գործի մէջ, նոյն իսկ կրթականին, մամնան մեծ գեր կը խաղայ:

Իսկ Հայ-Բողոքականներու Հայուհեաց վարժարանը իր սեռին մէջ առաջնակարգ հաստատութիւն մըն է, գիւղին զեղեցիկ մէկ գիւղին վրայ կառուցուած, որուն տեսչուհին և անօրէնուհին է Միս Թառնըմ, հայախօս Ամերիկուհի մը:

Հայուհեաց վարժարանին ներքին կազմակերպութիւնը ամէն գովեստէ վեր է պէտք է ըսել, մաքուր, կանոնաւոր և մեքսիք:

Պոլիսէն և թէ գաւառներէն եկած ժողովուած են հարիւրէ աւելի աշակերտուհիներ գիւղերէն, բացի ցերեկեայներէն: Դասախօսութիւնները կանոնաւոր, և կարծես բովանդակ շէնքին մէջ կը տիրէ տարրը որ տիրէ ինքին կը կոչուի: Գո-

հաշտութիւնս բերնուց յայտնելէ վերջ Միս Գառնիմի, իրրեւ անաշտու այցելու հրապարակու ալ իմ շնորհաւորութիւններս կը փութամ յայտնել այդ հաստատութեան, և կը մողթեմ որ նոյն այդ տիպար շէնքը իր ներքին կազմակերպութեամբ օրինակ բլրայ իր շարժի նմաններուն:

Հոս հաճոյքով պիտի յիշատակեմ, Պարտիզակի բաշտապոյն վարժարանը, իմ նախկին օրրանս, զոր այցելելու բազմը սնեցայ վերջին պտոյտիս:

Բարձրագոյն վարժարանը, որ հիմնովին բարեփոխուած, նորակառոյց շէնք մընէ գիւղին ծայրը բլրակի մը վրայ, իր հսկայ տարածութեամբ և զեղեցիկ տեսքով առ ինքն կը ձգէ բոլոր այցելաներու աչքը, նոյն լակ հեռաւոր ծովէն:

Տօքթ. Չէմպլըր, համակ ելի ալեւոր Տնօրէնը, իր ահա չ հիւրասիրութեան մէջ խօսեցաւ զպոստի տնօրէնութեան վիճակին և կրթական կազմակերպութեան վրայ, յիշեց վարժարանին հալիւրտութիւնը շրջանաւարանները, որոնք պատուարեր գիրք մը ունենալով, ահա մը չինած և վեր տաւ ինչ հաստատութեան փնտրելու պատիւը:

Տօքթ. Չէմպլըր իր վերջին ճամբարդութեան միջոցին յԱմերիկայ, իր հետ բերած է, հաւաքածոյ մը շրջանաւարտ երիտասարդներու, որուն ամբողջութեամբ անուշ յիշատակ մըն է մեծայարդ Տնօրէնին և պատիւ հաստատութեան:

Վարժարանը ունի իր կարողագոյն ուսուցչական մարմինը, մասնաւորապէս Բրոք. Արմինտի էֆ. Տէր-Յակոբեան, որ մնայուն ուսուցչական է վարժարանին:

Շէնքին բոլոր մասերը իրենց յատուկ կարգ կանոն ունին, զատարանները օգտաւն, նշարանները բարձր և մաքուր:

Վարժարանը ունի նաև իր լապտարաւորը, բնական դիտութեան և տարբարանութեան համար:

Հաստատութեան մատակարարութիւնը յանձնուած է Մեծ. Կարապետ էֆ. Գանաւեանի, որուն ձեռնհասութիւնը և կարողութիւնը անվիճելի է պէտք է ըսել:

Բան մը՝ որ էն փնտաւած առաւելութիւնն է, մասնաւորապէս հեռաւոր գիշերօթիկ վարժարանի մը համար, հոն բարձրագոյն վարժարանին մէջ պլանիները կանոնաւոր ուսումնէ զատ կը փայտին նաև բնական կան և հայրական խնամք և հոգածութիւն, շնորհիւ Տօքթ. Չէմպլըրի և իր Տիկնոջ, որոնք ջերմ վերաբերութիւն մը ունին իրենց բոլոր տակ զանաւոր աշակերտ-ղաւակներուն հանդէպ:

Իսկ որոնոցը որ բարձր վարժարանին յարակից նորակառոյց շէնք մըն է, կը վարէ Միս Հիւրնրմ Ամերիկուհին: Այս անձնուէր և անգլագական օրհորդը անձամբ կը հսկէ և կը վարէ այդ հաստատութիւնը և ուսանց փոխադրութեան:

Շէնքը իր բարձր գիրքով և մաքուր կազմակերպութեամբ անվիճելի է պէտք է ըսել, ուր ապաստանած են բազմաթիւ զեղծակ որբեր, և որոնք մեր մը հոգաւոր խնամքը կը փայտին առանց զգուշ իրենց տնտր և արտաճմիկ վիճակը:

Վերջապէս, որչափ կրցի հոս կարճ տողերու մէջ ամփոփել տալաւորութիւններս այցելած վարժարաններու նկատմամբ, սա երբեք յիշատակեան յանգեցող թէ, զորի մը յաջողութիւնը գործաւորին կարողութիւնն կախում ունի:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս հեղափոխական միջոցներով միմեկին հաշտեցնելու և խնդիրներուն քաղաքական դաշտայնները կը սպառնալու մեր մտքերուն մէջ, երբ կ'անցնինք թաւախալ թաւառաքներու մէջէն, նոյնպէս ալ, մեր մտքերուն ու սրտերուն մէջ քանդակուած կը մնայ բանաստեղծութիւնը, որ ըստ ինքեան աւելցուած ինքնին մեր սրտերուն հետ :

Բանաստեղծութիւնը, ըլլայ արձակ կամ ոտանաւոր, կարելի եղածին չափ ամբողջ գրուելու է, որ ընթերցողը կարգացած ատեն գիւրդին ըլլայ գաղափար մը յայտնել կամ կազմել անոր վրայ : Ոչ ապաքէն կարծիք մը յայտնելով կամ պատմութիւն մը գրելով պէտք է բանաստեղծութիւն համարինք, զգացումներ յայտնելով կամ տեսարաններ պարզելով կարծեմ բանաստեղծութիւն մը ըրած կ'ըլլանք, ըստ իս, այսպէս է :

Մարդ մը կրնայ ամէն բանի վրայ գրել ու ճառել, ինչպէս կը գրէ Վահան Փափագեան և . . . սիրելի բարեկամ Միմոս կալուօշը, բայց ատենք գրելով բանաստեղծութիւն մ'եղած չըլլար, որովհետեւ անոր մէջ կը պահուի ա՛յն ներգաշնակութիւնը, որ երբեմն աչքովն կը հմայէ մեզ իր յանգեցողուն ճաշակաւոր շարադրութեամբ : Ինչպէս կը յաջողակուինք ու կը հմայուինք գիշեր ատեն, երբ նստած ըլլանք ջատրովանի մը քով, որուն թարթալով ջուրերը երբ դարձեալ իշնան վար, անոնցմէ կը լսուի մեղմ ձայներ որ իրենց իշխուածքովը կարծես երաժշտութեան մը տղաւորութիւնը կը ձգեն վրանիս, նոյնպէս ալ ծառերուն տերևները օրօրելով գիւրդու մը, հմայիչ սօսափուն մը կը հոնեն և կարծես կը փարատեն մեր յոյզերը տանելով անոնք վեր՝ անհունութեան ծոցին մէջ՝ հոն վնասուելու համար իրենց հեշտանքին նուրբ և Ահա՛, բանաստեղծութիւնն ալ ստոնց պէս է, և ան շատ անգամ մեզ անըզգալաբար գէպի իրեն կը քաշէ, ու պահ մը մոռցնել կուտայ ալեկոծ մտքերնուս մէջ ի սոհերը :

Ես հոս՝ բանաստեղծութեան վրայ շատ բան չպիտի գրեմ, այլ մէջ պիտի բերեմ երեք նշանաւոր բանաստեղծներու կարծիք-

ները, որոնցմով կարծեմ կրնայ ընթերցողը գաղափար մը կազմել անոնց վրայ :

Նախ՝ Արիստոտէլէ սկսինք :

Արիստոտէլ՝ բանաստեղծութեան արհեստին համար չինած իր ճառին մէջը գեղեցիկ սահման մը կուտայ բանաստեղծութեան, այսպէս ըսելով, « Պատմիչին ու բանաստեղծին տարբերութիւնը ան չէ որ մէկը արձակ կը գրէ և միւսը ոտանաւոր : Ապաքէն շատ աղէկ կրնայ մէկը Հերոդոտոսի պատմութիւնը ոտանաւորի դարձունել, և անիկայ ոտանաւորի մէջ ալ տակաւին պատմութիւն մը մնայ, ինչպէս որ է հիմակ արձակին մէջը : Բայց անոնց զանազանութիւնը աս է որ՝ պատմիչը կը գրէ ինչ որ հանդիպեր է, իսկ բանաստեղծը՝ ինչ որ կրցեր կամ հարկ է եղեր որ պատահի, աս է պատճառը որ բանաստեղծութիւնը առաւել կարեւոր և առաւել բարոյական է, քան պատմութիւնը, քանզի բանաստեղծութիւնը ընդհանուր բաներուն վրայօք կը գրէ, իսկ պատմութիւնը կամ պատմիչը մասնաւոր բաները կը պատմէ » :

Ո՛ր է մէկը կարող չէ որ ասկէ աւելի քիչ խօսքով և աւելի փոխադասական պարզութեամբ բանաստեղծութեան յարգը հաստատէ : Բանաստեղծութիւնը՝ ըլլայ ան արձակ թէ ոտանաւոր, թաքուն մնացող կայծ մ'է մտքերու մէջ, որ մարդուս իղձերը կամ յոյզերը մէջ մը վեր կը սառաւնցնէ և մէջ մ'ալ անոր երեւակայութիւնը անդունդին խորերը կը սուզեցնէ :

Ես այնպէս կը հաւատամ թէ, պատմիչին և բանաստեղծին տարբերութիւնը շատ քիչ է, որովհետեւ մին իր հանդիպած բաներուն վրայ կը գրէ և միւսը իր երեւակայած բաները ընդլայնելով իր զգացումները կը յայտնէ այնքան ճարտարօրէն, որ մարդուս հոգին անզգալաբար իրեն կը քաշէ և կը գիւթէ գիւթը :

Այս մասին վրայ Պաքոն՝ որ հասարակօրէն Արիստոտէլի հակառակորդը սեպուած էր, անանկ կը հետեւի անոր որ կարծես թէ ճիշտ վերոյիշեալ խօսքերը կը մեկնէ :

Ան ալ այսպէս կ'ըսէ :

« Որովհետեւ զգալի աշխարհը արժանապատուութեամբ մարդուս հոգիէն ստորնադրոյն է, այնպէս կը թուի որ՝ բանաստեղծու-

թիւնը մարդկային բնութեանը կուտայ, ինչ որ պատմութիւնը չուզեր տալ, ու քիչ չատ կը հաճեցնէ հոգին կեղծեալ բաներով, որովհետեւ անոնց հաւատար իրական բաները չունի որ առայ անոր, վասն զի թէ որ ուշադրութիւն ընէ ըսածիս, բանաստեղծութեան աս պաշտօնիս մէջը կը գտնայ ան ճշմարտութեան մեծ ապացոյցը՝ թէ մարդկային հոգին իրերուն մէջ առաւել կը սիրէ աւանդ վստմութիւն և փառասիրութիւն, զրօտանք և ներգաշնակութիւն, որն որ բռնութեան մէջ չկրնար գտնել մարդու անկուսէն ի վեր: Ասոր համար՝ այն դորձերը և դիպումները որ ստոյգ պատմութեան նկատ կ'ըլլան, չունին ան վստմութիւնը՝ որուն մէջ մարդկային հոգին հաճութիւն մը կը գտայ, վազվազակի բանաստեղծութիւնը որ առաւել զբանական դորձեր կը հրնարէ: Ասիկէ զատ՝ որովհետեւ ստոյգ պատմութեան մէջի դիպումները չունին այնպիսի յատկութիւն մը որ առաքինութիւնը իր վարձքը գտնէ հոն և մեղքը իր պատիւի մը, վասն զի բանաստեղծութիւնը պատմութեան աս պակասութիւնը կը լեցունէ, և այնպիսի հնարք մը կը գտնէ որ առաւել յարմարին աս նպատակին և առաւել համեմատին նախախնամութեան օրինացը: Նաեւ ստոյգ պատմութիւնը՝ իր միօրինակ անցքերովը ճանձրութիւն կուտայ կարգացողին, իսկ բանաստեղծութիւնը անոր անորոշակը կարծեցնէ արտաքին կարգի անակնկալ և զանազան դիպումներ ցուցունելով, որոնք լեցուն են մէկմէկու ներհակ այլ և այլ անցքերով, անանկ որ աս բանաստեղծութիւնը ոչ այնչափ զովելի է իր տուած զուարճութեամբը, քան որչափ վստմ հոգի և մաքուր բարք ցուցունելուն՝ որ կրնան իր պտուղը ըլլալու: Ուստի ոչ առանց իրաւունքի է կարծելը՝ թէ բանաստեղծութիւնը գերբնական լսն մը կը պարունակէ, այսպէս վստմութիւն մը կուտայ մտքին, կը յափշտակէ և գրկիլէ բարձր տեղուանք կը տանի կեղծիքները, մեր փափաքներուն յարմարցնելով, փոխանակ իրերուն հնազանդեցնելու հոգին, ինչպէս որ խելքը և պատմութիւնը կ'ընեն»:

Պաքոն՝ այս սողերով Արիստոտէլի ըսածը կը մտնէ, բայց փիլիսոփային խօսքերուն քրիստոնէական զգալիար մը կուտայ:

Քանզի Պաքոն կը պարագլը քրիստոնէական գործին մէջ:

Յիրտի, երեւակայութեան խիստ գեղեցիկ պաշտօն մը տալ է ասիկայ, ու զրգուարին է անոր զօրութեանը վրայով ասիկէ աւելի զողովար մը ունենալ:

Իսկ Ֆէնըլոն, որ նոյնպէս կրօնքի վարդապետութիւններուն մէջ փիլիսոփայութեան հիմը կը փնտրուէր, բանաստեղծութեան սահման մը տուաւ, որ բոլորովին հակառակն է Պաքոնի խօսքին:

«Բանաստեղծութիւնը մէկ աշխոյժ կեղծիք մըն է բնութիւնը նկարող, թէ որ մէկը նկարելու ճարտարութիւնը չունի, երբէք չկրնար մտիկ ընողին մտացը ազդել իր խօսքը՝ որ զխովին անարուեստ է, թոյլ և ճանձրացալի: Սկզբնական մեղքէ ետք՝ մարդս բոլորովին զգալի բաներու մէջ արդիւրած է, և աս է իր մեծ թշուառութիւնը որ կարող չէ երկար ժամանակ վերացեալ բաներու միտ դնել, պէտք է մարմնաւորել ան տմէն սորվելիքները, որ կուզէ մարդ. իրեն միտքը սպաւորելու ձեւերու կարօտ է, որ իր զիտողութիւնը անոնց վերայ հաստատէ:

Ահա՛, բանաստեղծութիւնը՝ որ քիչ մ'առաջ Պաքոն ցուցուց իբրեւ բողոք մարդուն, անկմանը դէմ, Ֆէնըլոն ընդհակառակն աս թշուառութեան հետեւութեանը և նախատալից նշանը կը համարի, իսկ Արիստոտէլ՝ այնքան չհեռանար որչափ որ ակիզրէն կրօնայ կարծուիլ, վասն զի բանաստեղծութեան մէջ զաղափար մը կայ որ պէտք է յայտնի ընել, և զանիկայ յայտնող ձեւը:

Բանաստեղծութեան ազդեցութիւնը՝ մասամբ մը պատմութեանն չա'տ վեր է, անիկայ մարդուն որտի մէջ անջինջ կերպով կ'մնայ, բայց պատմութիւնը չուտով կանցնի: Այսպէս ուրեմն, բանաստեղծութիւնը կըլայ տեսակ մը ընդունարան, որ իրեն կը քաշէ մարդու զգացումները և հոգին:

ՎԱՀՐԱՄ ՄՈՒՃԱՆ

Էլլէրէկ-Ֆէնէսէի համար թերթի գործակալութիւնը յանձնուած է ՄԵՄ. ԳԱՅՐԻԷԼ ԷՅ. ԹԱԳԻՈՐԵԱՆԻ, որուն պէտք է գիտել բաժանորդագրութեան համար:

ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

Գրականութեամբ զբաղող ամէն ոք իր խորհելու կերպը և ճաշակը, որուն մղումով փարած կը մնայ գրականութեան: Ոմանք ժամանցի համար միայն, ոմանք օգտակարութիւն մը մատուցանելու գոհունակութիւնը վայելելու համար, ու շատեր ալ յիշատակ մը թողելու տենչով կը շարժեն իրենց գրիչը: Այսօրուան օրս գրականութեամբ պարագլուհերուն մեծագոյն իտէալն է այս, ու թէ և ըստ երեւոյթին փառասիրութիւն կը թարգմանուի, սակայն չէ այսպիսի: Մեր մէջ ոչ ոք զրամ չահելու, հարստութիւն դիզելու նպատակով կը գրէ: Այսօր կան լրագրի վարիչներ, որոնք բան մը չշահելէ զատ վրայ ալ կուտան, ասով հանգերձ չեն լքեր սկսուած գործը: Գրականութեան սէրը, արուեստին ձայնն է պատճառ այս երեւոյթին:

Դուրեան, մեր անմահ քերթողը, իր ամենէն զգայուն ոտանաւորներէն մինն ինքիւր անոր: Երկրի մէկ խորշին մէջ աննշան չմնայ իր հողակոյտը ու յիշատակն ալ չի թաւաթի, ահա իր իտէալը, որուն փարած էր նաեւ Շէքսպիր:

Շատեր սակայն չեն կրցած հասնիլ իրենց գրական փառաքին:

Մտքի արտադրութիւններուն մէջ քանակէն աւելի որակը, ծաւալէն աւելի բարձրութիւնը նկատողութեան կ'առնուի: Դուրեանի «Տրտունջ»-ը, «Լճակ»-ը, «Իմ մահը», «Սիրեցէք զմիմեանս»-ը — իր անմահութեան չէնքին չորս անկիւնաքարերը — չմոռցուելու դատապարտեցին իր յիշատակը: Տանթէ, Հոմերոս մէկ երկու գրքերով կ'ապրին, իսկ որչափներ քառորդ դար, կէս դար գրականութեան հը զբաղած, բայց մահուընէ տասը, քսան տարի վերջ մոռցուած են:

Գրականութեան մէջ քիչ բայց լաւ, ահա՛ անմահութեան միակ ճամբան:

Տր. Գլխովոն

ԵՐ. Մ. ՃԻՒՆԵՐԵԱՆ



ՊԱՐՏԱՏԵՐՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. — Դիտեմ, ուշացուցինք ազնիւ պարոնս: Կաղաչեմ ներողամիտ եղիլ, իրաւ որ ամօթով մնացի, քիչ օրէն կը կարգադրենք անհոգ եղիլ:

2. — Ապահով եղիլ, դալ չարթու անպատճառ կը վճարեմ:

3. — Մի անգաղարիւ եղբայր, զրպանդ գիտցիլ, մինչև ամառը լուս ստակիւ կ'առնես:

4. — Նեղութիւն ունիմ, քիչ մ'ատեն եւս սպասէ:

5. — Այսչափ համբերեցիր քիչ մ'ատեն ալ համբերէ ինչ կ'ըլլայ:

6. — Միտքս է եղբայր, պիտի վճարեմ, բայց առ այժմ պատրաստութիւն չունիմ:

7. — Այսօր վճարումներ ունիմ, դալ չարթու եկու:

8. — Հիմայ չունիմ, բայց չարթու մէջ բան մը կ'ընենք:

9. — Մեծ բան մը չէ՛, կուտանք, ուրիշ անգամ եկու:

10. — Ես ուզել չեմ տար սիրելիս, ունենամ նէ կը հանեմ կուտամ:

11. — Մինչև հոս դալու ձանձրութիւնը մի ունենաք ես անձամբ կը բերեմ:

12. — Ունեցած ատենս չեմ դար, դժբաղդարար այսօր ալ գամաց ստակ չկայ:

13. — Հիմայ չեմ կրնար, վաղը կամ միւս օր հանդիպէ՛:

14. — Համբերութիւն, քիչ ատենէն կը վճարուի, Աստուած ողորմած է:

15. — Կաղաչեմ, ամիս մ'ալ համբերէ:

16. — Դո՛ւն մենէ չեմ կորսնցուներ, յաջողութիւն մ'ըլլայ նէ՛ էն առաջ քու ստանկը պիտի տամ:

17. — Շատը դնաց, քիչը մնաց, քիչ մ'ալ սպասէ:

18. — Տեղէ մը ստակ պիտի գայ, առնեմ նէ էն առաջ քու հաշիւդ պիտի փակեմ:

19. — Այնիդին հետ հաշիւ մ'ունիմ, մինչև որ չկարգադրեմ մարդու ստակ մը չեմ կրնար տալ:

20. — Այս միջոցիս ատենը հիւանդ ունիմ անով զբաղուած եմ, ուրիշ ատեն եկու:

21. — Աստուած ինձի, ու ես ալ քեզի:

22. — Ես ալ չառ մը պահանջքներ ունիմ բան մ'ալ չեմ կրնար կոր թրցունել, մէկ կողմէն առնելու եմ որ կարենամ միւս կողմէն պարաքերս հոգալ:

23. — Բիշ մ'առաջ գալիք, ինչ ընեմ, ձեռն առաջ օրինակութեան տալի, ինչ գիտնայի թէ այս պահուն պիտի դաք:

24. — Ինչ է ան եղբայր, ալ մարդ պարաք ունեցած չէ՞, կամաց կամաց ա'ն:

25. — Աստուածս դիտէ ա, սիրտս կայ բոյց ձեռքս չկայ, ինչ ընեմ:

26. — Այս օրերս չեմ կրնար առլ, մինչեւ ամառ վերջ պիտի սպասես:

27. — Կամաց կամաց ըսինք ես, հոգիդ եղաւ:

28. — Գնա բանդ պէ՛, հիմայ գործ ունիմ, փարա ուղեկուն ժամանակն է:

29. — (Մշակին) Թորոս միաքս ձգէ՛, միւսին փարան շարաթ գրկենք:

30. — Խաչ որ դալ շարթու կուտամ:

31. — Բանի՞ փարադ պաթմիշ եղաւ, կամաց կամաց:

32. — Երեթպէս նեղ վիճակ մ'ունիմ, եղբայր, կը ցաւիմ թէ չպիտի կրնամ առլ:

33. — Է՛յ, չունենամ նէ հոգիս պիտի առնես:

Հաւաքեց

Օ. ԱՄԻՐԵԱՆ

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Դուն մի՛ կարծե՛ր քե չեմ սիրե եեզ աղւո՛ր. Բայց վախճալու՛ քե կը պղծեմ այն պարգեւ՝ Ո՛ր բնութեան սիրուն գործն է փառաւոր՝ Աչխոս միօ: Կը խոնարհեմ եւ առջեւ:

Կուտ վայելին մեզ զգուսն կայ, վառահե, Մի՛ կասկածիր՝ քե պատեումիս վեճ խոսան Ուրի սիրս մը կուգեմ բնութի՛ որ գուցէ, Անհունին մեծ գաղտնիք հո՛ւ կը կարգան:

Բայց չե՛ հոգիս, անհուն երբեք չի չափուիր Կեռ սիրք չի կարգալուիր. — գաղտնի մի՛տ — Որ մարդկութիւնն դեռ չէ տուե վեճուն՝ իր, Ու չէ պեղուե դեռ իր յաստին ամբ սրիօ:

Ուրեմն յաւե՛ս կուգեմ սիրել եեզ հոգի՛ս՝ Զի դուն պահուած մեծ աւաղ մ'ես սիրակառ. Բայց չ'ըլլայ քե ինձի փորձել փափագիս, Անոգոս է. անհուն ս'երն սուրբ կըլլան:

ՍՏԵՓԱՆ ԽԱՅՈՒՆԻ

ՊԱՐՏԷԶԻՍ ԵՐԳԸ

Ուռնեաց տակ վարսպեղ

Պարտեղիս մեջ ոչ շըբեղ,

Արդ կը հանգչիմ անխառվ,

Էրեստ կեանքին սեւ, գորով:

Երկինք որ կոյս մ'ե հնոյց

Կը ձօնե ի՞նչ լոյս մ'անոյց

Առօրին՝ իր շող մարգարիս

Պարտեղ իրեց մեղմ ժպիս:

Սեւ ստուերն խակ զիւերի

Երբ շիրմիս մօտ դեգերի,

Դարձեալ դիտեմ հոգեզմայլ

Կոյս կապոյցը գեղսփայլ:

Զեփլոնը զիրգ աւօտին

Գեղեզուն աղու սոխակին,

Կ'երգեն կեանքիս այն յոյզեր

Որոնք զիս հո՛ս եմ սուգեր:

×

Կ'ըզմա՛ք ապրիլ երջանիկ

Որպես անհոգ քիթոնիկ,

Մի՛ պրպրեք, դառհաւամ

Կ'անցի ալիքը տարած:

Դեռ փոքունը իղձերուս,

Ժրպտիլը սկն յոյսերուս,

Զողջունս, կե սնես կոյսի

Տեսայ որ փոյր կը խուսի:

Ու հո՛ս, յուզմանց հետ քախոս:

Որ կոտորեմ հոգուդ մօ:

Գտայ հանգիստ, նիրհանոյց


Անվիտ, անյու եւ անյու:

ՅՈՒՆ. Գ. ՊՈԶՄԱՆՆ



ՆՇԱՆԱԾՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

(ԲՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ)



Արդեօք ըսող կամ մտքէն անցնող կա՞յ ձեր մէջ թէ, սա Լիլան ալ ամէն շաբթու գլուխ կ'արդուկէ :

Բայց քանի որ մայրը իր աղջկան միտն, կիներ իր ամուսնոյն չապիկները, օրերով իր եղբորը կիրակիի ձերմակ բլրի ժիւղէն կ'արագուկէ, ինչո՞ւ Լիլան ալ իր ընթերցողներուն գլուխը չ'արդուկէ, եթէ երբէք մօր ըսածները ու դրածները արդուկի չափ արդիւնք մը չեն ի տար ընթերցողին :

Օգտաւոր չիլը տեսած էք : Ձերմակ չիլ մըն է ան, որուն մէջ վճիռ ջուրը կեւեւայ, բայց վարպետ ձեռնածուն նոյն այդ չիլէն անթիւ անհամար գոյներով հեղուկներ կը պատրաստէ, որոնց ի տես կը հիանանք, կ'աղչինք ու վեց ամուսնու տղոց պէս շողիկ կը վազցնենք կուրծքերնէս վար :

Իմ արհեստս ալ նոյնն է, կապար գրիչ մը և չորս թերթ թուղթ, և ահա կ'արտադրուն այն բոլոր գրուածքները, որոնք գիտեմ թէ փորի ցաւ կ'ուտան ամէն անոնց, որոնց ընտանեկան կեանքը քիչ չաա կը յարմարի գրուածքին :

Նա՛, այս անգամ ալ նշանած միւսիւնները նիւթ պիտի առնեմ ու պիտի նկարագրեմ, կարգ մը կարեւոր արուարձաններու սովորոյթը :

Մարդկային կեանքին էն անուշ վիճակը նշանածութիւնն է, որովհետեւ այդ բեռնախօտին մէջ է որ մարդ յոյսով ու յոյզով կ'ապրի, յարգանք կը վայելէ, և աւելին իր խօսեցեալին սէրը, որուն նմանը ամուսնութեան մէջ չի կրնար ունենալ : Էթիքեք և սեռեմոքսին երկուքն ալ միշտ վառ կը պահեն սէրը իրարու հանդէպ : Նշանածութեան մէջ, այրը անդրաւարտիքին կապիկները քսքսելով սենեկին մէջ չի կրնար պտըտկիլ, ոչ ալ օրիորդը բռնկուած միտոյով ու ֆօռոշ մազերով դէմը կեւեւայ անոր, այլ միշտ կոկիկ, միշտ մաքուր և ամօթխած կը գտնուին իրարու հանդէպ : Ամուսնութենէն վերջ ալ կարծես

լիրթածութիւնը, քիքիքսիքութիւնը, սրբորթութիւնը արող բնոյթը կ'ըլլայ, լուծելով իր մէջ այն անուշ տարրը որ նշանածութեան օրերուն բանասէն էր :

Ինչ և է, հոս չպիտի ուզենք ընտանիքները պաղեցնել իրենց ներկայ վիճակէն և կամ առաջնորդել խրատել զիրենք, որպէս զի թօռնիստանով մը կրկին նշանածութեան շրջանը բոլորեն, այլ ինչ նիւթ որ խոստացանք, շարունակենք հոս, եթէ, ինչպէս ըսի, գլուխ արդուկել չըլլայ մեր ըսելիքները, այս տաք ու հեղձուցիչ օրերուն :

* * *

Նախ առնենք Բերացի միւսիւն, որուն նշանածը կամ Բերայէն կըլլայ և կամ Գաւոր գիւղէն :

Բերացի նշանածը ուրիշ արուարձաններու տղոց պէս կիրակիին չապասէր իր պագայ կէսին P. S. V. P. էն ձեռք առնելու համար : Անիկայ օր ժամ չունի, իրեն համար աւելի դժուար է և ձանձրացուցիչ, փողոցը կենալ և պօթիւրը ներկելը քան թէ պիտիւրը ոլորելով իրենցուն տունը այցելելը, այնպէս որ, երբ աղջկան մայրը օճախին տակ անուշ եփելով պարապած ըլլայ օրուան մէկ ժամուն, և դուռը զարնուելուն միւսիւն գլխարկը հանելով՝ հուսուն երկու ակունքները ցուցադրէ, « Խըմէթի վրայ եկար տղաս, Էօֆէնին վերն է, դուք քիչ մը խօրաթուեցէք, ես ալ տաք տաք կը հասցունեմ » ըսելով, գրկաշափներով թոյլ կուտայ տատրակներուն, որպէս զի կտուց կտուցի դան իրենց վանդակին մէջ :

Բերացի նշանածը ո՛ր և է արգելք մը չունի իրենցուն թիւր առնելով բեռնաբարի հանելու մասին : Անիկայ ձեռքովը դրածին պէս կը խածնէ և ուզած ժառոտէն կրնայ տանիլ, բաւական է որ զորքանչին աչքը մտած ըլլայ, անիւ պապան կարեւորութիւն չունի, միշտապէս մը բզլիւնին չափ ձայն չի

կրնար հանել խեղճը, ամէն քան և ամէն պարագայ զոքանչէն կախում ունի ի նպաստ փեսացուին:

Բերացի նշանածը տուն փեսայի պէս բան մընէ, անիկայ աւելի կը սիրէ կազի լոյսով վայելել իրենցուն, քան թէ օրուան մէջ:

Տուն դացած ատենը անպատճառ դուրսէն բան մը գնած կըլլայ, և շարաթը մէկ անգամ Սբաւնտիտէն կաթօ, մինչ օրիորդը պատուհանէն կերեւայ գերդ ճաթօ:

Երբ առնէն դուրս տեղ մը երթալ հարկ ըլլայ, աւելի կը նախընտրէ ոտքով թուռուէն անցնիլ՝ քան թէ բաց ֆայթօնին մէջ ձիվերը անկել ի ցոյցս հազարաւոր դիտողաց:

Բերացի նշանածին էն սիրած զբօսանքն է, իրենցուն թեւն առած գիշերը թատրոն տանիլ, և ամառը մէկ երկու կիրակի Մեծ կղզի, օթէլ ճաթօսօ անցընել. . . գիշերը տուն դառնալը պայման տուալին:

Բերացի նշանածը իր վիճակին մէջ այնքան կը լրջանայ, այնքան կը քաշուի առանձին զբօսանքէ, որչափ չընէր ամուսնանալէն երկոստանեակ մը տարիներէ վերջ, աս ալ իր գովելի յատկութիւններէն մին:

Երբ Բերացի նշանածը մինակ մընայ իրենցուն հետ, կամ Լեյլընզ Հեռլայ կը կարգայ, և կամ շանսօնէթ մը կը մտնայ, այնքան վարժուած սովորած փորիկ է անիկայ այդ վիճակին, և ահա ինչու Բերացի զոքանչը տամա թաշիի ողես կարը առած առնց սենեկին պուճախը չի քամուիր:

Երբ քաւալթ մը, կամ քօթիլուցու կերպաս մը գնել ուզէ, անպատճառ իրենցուն ճաշակովը կուզէ որ ըլլայ, մէկտեղ մաղաղան կը մտնան, և նոյն իսկ սակարկութիւնը օրիորդը կընէ իբրեւ վարժ Բեռնազիէն: Իսկ օրիորդին ճաշակը անվիճելի է, և անոր կոնակը, գլուխը կամ ոտքը անցուցածը անպատճառ վերջին նուազի կըլլայ, և յարմար միւսիւն կուտնի:

Բերացի միւսիւն փողոցին մէջ կը առնայ իր առնելիք օրիորդը, սուառէի մէջ կը հաւնի, ժառանգը դործը կ'եփի, և ութ օրէն կը նշանուի, առ առաւելն իննամիսէն գլուխ գլխի տալու համար:

Սկիւտարցի միւսիւն:

Վարժարանէն շրջանաւարտ ելած օրէն, երբ հանդէսին բեմին վրայ իր վերջին քեզը կարտասանէ, անպատճառ հանդիսականներուն մէջէն կոկոն մը կը դատէ իրեն համար, այնքան կը սիրէ ընտանի կեանքը:

Սկիւտարցի նշանածը, նշանած օրէն տէրը կըլլայ իր առնելիքին, (վերէսիէի թահսիլ չի հասկցուի) ու ամէն դործ զբաղում մէկդի ձգած իր նշանածին յուշերովը կ'օրօրուի:

Վիլիթ պատկերը միշտ դրողանը՝ պօսօներուն հետ մէկտեղ կըլլայ, որուն վրայ նայելով կ'անցընէ շաբթուան վեց օրերը, եօթներորդին, այսինքն կիրակիին՝ անձամբ վայելելու յուսով:

Սկիւտարի մէջ սովորութիւնն չէ զոյգ տատրակները վանդակէն արձակել մինակ իրենց հովին թեւածելու համար հոս հոն, այլ միշտ զոքանչը միասին կըլլայ, որ և տեսնուէն կը քալէ երկու երեք մէթը կը նահէն, մէջերին անցած խօսակցութիւնը լսելու համար:

Սկիւտարցի նշանածը շարաթ իրիկունները կանուխ կը պառկի, կիրակի ուշ կարթընայ, առաւօտուն կ'ածիլուի և քորջը բուռն կը քսուի, ինչպէս նաեւ անոր էքսթրէն կը դործածէ թաշիկներէն, և մինչև իսկ բառաշիւն համար:

Սկիւտարցի նշանածը անպատճառ 3 1/2 նոց դըվանալը երկու տուփ սիկառ կ'առնենայ դրողանը Ֆրսքի Ֆրսքի քաշելու համար, աներոջը քիթն ի վեր, որոնցմէ հինգ տասը հաւը Տիկին զոքանչը կ'սպառէ:

Իր էն ախորժած զբօսանքը խօսեցեալին հետ զբօսավայր մը նստիլն է և աւելին, ձեռքովը սե խալեարը բերանը դնելը, զոր շատ լաւ կը վայելցնէ բիքթօն:

Երբ զոյգ մը դուրս փողոց ելան, անպատճառ օրիորդին բէլընը թեւը կ'առնէ ան՝ կէս-ամուսին ձեռով մը, և ճամբան քալած ժամանակ եղբորն իսկ բարեւ չի տար, այնքան նախանձոտ և պատուոյն տէրն է, պէտք է ըսել:

Սկիւտարցի միւսիւն երբ նշանուելու ըլլայ, իր գիւղէն աղջիկ չ'առնէր, այլ միշտ հեռաւոր արուարձաններէ կ'ընտրէ ան իր

կեանքի ընկերը, ինչո՞ւ, չեմ գիտեր: Եւ այն
սա զիտեմ որ չառ ցանցաւ թիւ մը կը կտա-
մեն անոնք, որոնք փողոցէ փողոց հարս
առնել կ'երթան:

Բան մը, որ յատկանիշն է Սկիւտարցի
նշանածին, ան ալ կառք սիրելն է: Նշա-
նած օրէն մինչեւ ամուսնութեան օրը առնե-
լիք դրամաժութին կէտը կառաւարտին հետ կը
բաժնէ, այնքան կը սիրէ նստաւ ըստած
լիւքսը, և հինգնոց մը աւելի կ'ուտայ այն
կառաւարտին՝ որ նշանածին տանը մօտերը
գիտնայ չազել տալ մարակը:

Սկիւտարցի նշանածը իր յաջորդական
այցելութիւններուն սովորութիւն չունի նուէր
տալու իրենցուն, այլ միմիայն կաղանդէ
կաղանդ, և թէ երբէք դրամաժութի սակար-
կութիւնը երկնայ ու մէկ երկու տարի ետ
ձգէ Մեծ այտի արարողութիւնը:

Երբ սենեկին մէջ մինակ դանուին, իրենց
առաջին խօսքը զարգալաթը կըլլայ միշտ և
վերջին դիտողութիւնը դրած քաւալաթը:

Սկիւտարցի միւսին կը նշանուի այն տա-
րիքին, երբ Բերացին թուան տէր կըլլայ:

Գում-գաբուցի նշանածը.

Խօսք-կապ տարած օրէն կսկսի շարաթը
երկուք անգամ, կոճակը սօթ հագնել,
ժամացոյցը առանց չլթայի փիլէին դրոպանը
դնել նեկիթի, և շոգեկառքը երկրորդ կարգի
վախճան դուրս հանել գլուխը:

Գում-գաբուցի նշանածը ընդհանրապէս
կուղէ Բերացի օրիորդ մը ընտրել իրեն կին,
սակայն ընդհանրապէս կ'ամ Սամաթիայի
կըլլայ առածը և կ'ամ Պալաթէն, չառ ան-
գամ ալ Սկիւտարէն:

Երբ նշանուողի նուիրական գործողու-
թիւնը լմընայ, այդ վայրկեանէն նորէն կը
ծնի Գում-գաբուցի միւսին, թուղթ, նարտ,
պիլառոս, բոլորն ալ կը մոռնայ և իր պա-
րագոյ ժամերը կ'անցընէ ամայի տեղեր,
թուղթ մատխա ի ձեռին, հարսանեկան ծախ-
քերը հաշուելով:

Նշանուողի երեկոյէն իսկ կսկսի իր նոր
փեսայ գնումները ընել, և ամէն իրիկուն
անպատճառ բաքէթ մը կուսնայ թիւին տակ,
որուն ի տես դրացիները կըսեն իրարու «միւ-
սիւ այնինչն ալ նշանուել է»:

Նշանածութեան մէջ այնքան հանդարտ

է Գում-գաբուցին, որ հազիւ ամիսը անգամ
մը իրենցուն տունը կերթայ, ան ալ կար-
մըրելով ճեմկնալով, և միշտ զոքանչը կըլ-
լայ սիրտ և համարձակութիւն տուողը,
այնքան ժուռկալ է պէտք է ըսել:

Իր աներ պապին հանդէպ կը տածէ այն
լուրջ և խոնարհ յարգանքը, զոր չընէր իր
հօրը: Աներ պապին ներկայութեանը դրո-
պի տակերտի մը պէս ոտքերը, ծունդերը
քով քովի, կէս հակափոր կը նստի, ու միշտ
գետնի գաւթը կը համբէ, և անո ասոր
համար է որ Գում-գաբուցի մը նշանած աղ-
ջիկ ունեցող աներ պապները, աղուն
դտնուած զիչերը հաւերու պէս կանուխ կը
պուկին «ճահիլները վախիթ անցունեն» ի
մօտը:

Գում-գաբուցի միւսին երբ սենեկին մէջ
մինակ մնայ իր նշանածին հետ, խոպէն և
ամօթէն տակի շապիքը փոխելու աստիճան
խիտում կը կտրի, այնքան ամօթխած է կըր-
նամ ըսել:

Եւ երբ հարկ ըլլայ խօսիլ, տեսէք թէ
ինչ նիւթի վրայ խօսք կը բանայ միւսին:

— Ամուսն քանի՞ն է արդեօք . . . :

— Չեմ գիտեր, օրացոյցը վարի սենեա-
կէն էր . . . կը պատասխանէ օրիորդը, կու-
ղէք որ նայիմ անգամ մը . . .

— Շատ չնորհակալ կըլլամ օրիորդ . . .

Ու օրիորդը վարի սենեակը կերթայ ամ-
սոյն թուականը հասկընալու համար, մինչ
վերը մեր ամօթխած միւսին տօթիկն օդ-
առելով բաց պտտահանին առջեւ կը կենայ
և երկայն շունչ մը կ'առնէ:

Գում-գաբուցի նշանածը խօսք կապին օ-
րէն ասդին կըսկսի էքօնօփի ընել, ամօթի
ամառ իր նոր հարս կինը Սառը-կար տանե-
լու համար, ցերեկները չոր հաց կ'ուտէ և
օրը երկու երեք դրոշմ դանձանակը կը ձգէ,
այդ նպատակին համար:

Սոսկալի նախանձուտ ալ կըլլայ ամէն
տէրտիս վրայ, այնպէս որ, երբ կիրակի մը
իրենցուն հետ ընտանեօք զբոսալայր մը
գտնուին, աչքը անցնող դարձողներուն վը-
րայ կը տնկէ, որպէս զի պզտիկ կառուի
նայուածք մը տեսնելով ծաքէքը կռնակէն
նստէ ու վրանին յարձակի:

Գում-գաբուցի նշանածին փեսայ թեան
ծախքերուն մէջ էն առաջին և կարեւոր տե-

զը կը դրուեն՝ տալլը պատմա կեանքիկները , որոնցմէ երեք չորս հատ կարել կուտայ առ- տու իրինկուն հագնելու համար , երկրորդ խառիֆէյի վրայ ետեւ իւրիկնէ՝ բանուած քաբ- տանը թէպէտ իրեն համար նոր փեսայ թեան միակ յառկանիչն են :

Գում-գաւառցի նշանածը երբ իր նշանա- ծին առնը երթալը որոշէ , առջի իրինկունէն զլուսը տաք ջրով լուսլ կուտայ առտուին կամ թէյիկին , առտուն ոտքերը ջրով կը դնէ , նասընները կը կտրէ , եղունգները կը մաքրէ , գդակը կաղապարել կուտայ , նոր քաւալաթ մը կը կտայէ և ճամբայ կելլայ , չի մոռնալով բաքէթ մը 70 նոյ զըվանալը դըր- պանել :

Նշանուած օրէն կսկսի Պօմօնթի խմել , այն ալ ոչ ամէն իրինկուն , և բոլորովին կը ձգէ տիւղը , մասքիքան :

Մինչև որ ամուսնանայ քահանաներուն , թաղականներուն և մինչև իսկ ժամկոչին յարգանք կը բարեւէ , և ինքզինքը Աստու- ծոյ կուտայ , ամէն կիրակի առաւօտ և կե- ղեցի կը դիմէ , և դուրս կելլայ այն ատեն միայն , երբ՝ պատարագուր քահանան ար- դէն տունը հասած իրիկինին մասած ընել կուտայ ոտքերը :

Գում-գաւառցի նշանածին էն նուիրական բանը , իրենցուն մաղերէն թունճուկ մը ժամայոցին կունակի կախարիչին մէջ պա- հելն է , որուն վրայ կը նայի օրուան մէջ տասնէ աւելի անգամներ , այնքան տաք վերաբերութիւն մը կունենայ իր ապագայ ընկերուէին հետ :

Հոգի կուտայ , որպէս զի հարսնիքը շուտ կատարուի , վախնալով որ նշանը ետ կընեն զիմացի կողմէն :

Գում-գաւառցի երիտասարդը , զրամօթի- տէն աւելի դէմքի զեղեցիկութիւն կը փնտ- ուէ , այնպէս որ , եթէ ուզածին պէս մութ պատերուն լոյս տուող պատառ մը չի գտնայ ինքզինքը չի կապեր :

Գում-գաւառցի երիտասարդին համար չէ ինքնիրեն օրիորդ մը գտնել , հաւելի և նշանուել , այլ միշտ խլաւուղ ճատրներու ձեռքով կը կատարուի խօսք-կապը , և ասոր համար բաւական ալ ծախք կընէ ֆանթէզի :

Գում-գաւառցի նշանածը կաղանդէ կա- ղանդ պղտիկ ֆլեյթ մը լաքէտա նուէր կը տանի անոր պատգալին , իսկ նշանածին . . . գաղտուկ պաքիք մը :

Գատը-իւղցի նշանածը .

Եթէ կայ պարագայ մը , ուր աղջիկ ըլ- լալ կուզեմ , այն ալ Գատը-գիւղցի նշանած մը վայելելու համար է :

Հաւատացէ՛ք , մեծ փառք ու պատիւ է այն օրիորդին , որուն բաղդը ժպտած է , դէմը հանելով չիք միւսիւ մը Գատը-գիւղցի ման- չիկներէն :

Գատը-գիւղցի միւսին նշանած օրէն կըս- կըսի վայելել այն ընտանեկան առաւելու- թիւնները , զորս չորս տարուան Գում-գա- ռուցի տուն փեսայ մը չի կրնար ունենալ :

Չաթ դուռ .

— Ո՞վ է . . .

— Նշանածս . . .

Չութ դուռ .

— Ո՞վ է . . .

— Նշանածս . . .

Գիշեր ցերեկ , առաւօտ , իրինկուն , ո- բոշալ ժամ մը չունի ան , և մինչև իսկ պիտի յանդգնում ըսել թէ՛ տանը դրանք բա- նալին ալ գրպանը կըլլայ միշտ , փողոցը շատ չսպասելու համար , այնքան թէքլիֆ- սիդ կըլլայ իրենցուն հետ :

Գատը-գիւղցի միւսին այնքան հագուստ չինել չի սար , իր կեանքին մէջ որչափ նը- շանածութեան բեռիօտին : Գրեթէ ամէն ա- միս քօսթիւմ մը , որուն ճաշակը ինքը կո- թոշէ ու իրենցուն կը հաւնի անպատճառ :

Ասիկայ ընդհանրապէս իր գիւղէն աղ- ջիկ կ'առնէ և շատ քիչ անգամ Բերայէն , կամ Վոսփորի արուարձաններէն , Ասիական եղերքէն Գում-գիւղցունքէն վեր , իսկ եւրո- պականէն՝ Գում-գիւղցուն անցած :

Գատը-գիւղցի նշանածը իր ընկերուէին կը սիրէ այնքան բուռն և անկեղծ սիրով , որուն նմանը կարելի չէ տեսնել քոյր և եղ- բոր վրայ : Ամէն անգամ որ հարկ ըլլայ ա- նունը տալ , որովայնախօսի պէս հոգիէն կար- ճագանդէ ան :

Եթէ իր գրպանը դրամ չի գտնուիր նը- շանածութեան մէջ , պատճառը բացառիկ ծախքերն են , որոնք վերջը կը շտկուին ա- ներ պատգալին մահաւամբ , և կամ աղջկանը օժիւրն գինովը :

Գատը-գիւղցի նշանածը երբ զբոսաւայր մը գտնուի , կուզէ , կը փափաքի որ բոլոր

անցնողները իրենցում ին նային, հաճաք կը գլխայ ան երբ իրենցում զբաղի ժողովուրդը ինչո՞ւն իրեն հարցուցէք . . . :

Նշանածութեան մէջ ծուկնալու սխալէ մը ինքը հնարած է, և Գառն-գիւղցի նշանածը երբէք չի քաշուիր աղջկանը ծնողքին մօտ խուչս, բուքէս, աղուորս, հրեշտակս, անուշա ըսելու, և այս պարագան, լսողները անկեղծ սիրոյն կը վերագրեն . . . :

Թեւ թեւի առանձին պոռոյտը, և մինչև իսկ հեռուոր արուարձաններ այցելելը Գառն-գիւղցի նշանածին իճասն է, անիկայ երբէք չի քաշուիր այդ կարգի զբօսանքներու հրաւիրել իրենցուն, և կը փաստարանէ թէ՛ տեսնողը քոյրը կը կարծէ :

Գառն-գիւղցի նշանածը զոքանչին հոգի կուտայ, և իր սէրը արտայայտելու համար «մայրիկա» կըսէ ու չարուս չուրուս կը համբուրէ . . . աներոջը բացակայութեանը :

Երբէք ալքօլ չի գործածեր ան, մանաւանդ երբ նշանածին տունը գտնուի, երկու գաւաթ պիտան բաւական է իր ծուկնութիւնը շոգիացնելու :

Նշանած օրէն ախուսները դարմանելու կ'ելլայ ան, և տուի մը փոշի գնելով կէսը նշանածին կը նուիրէ անպատճառ :

Այն օրիորդը որ կուղէ իր ամուսնութեանէն վերջ ամուրիի կեանք մը անցունել, թող Գառն-գիւղէն երիտասարդ մը ընտրէ, այնքան հեռու կըլլայ ան նախանձէ, և չի փախցնէր իր կէսը որ և է անձէ :

Նշանուելու գաղափարը, Գառն-գիւղցի երիտասարդին մէջ շատ ուշ կ'արթնայ, բայց նշանած օրէն իսկ ընտանի կը դառնայ ան, և որպէս զի իր առողջութիւնը չի խաթարի, խօսք-կապին օրէն իսկ կսկսի ֆանէլա վարտիք հագնիլ :

Երբ Գառն-գիւղցի նշանածը իր ապագայ ընկերուհիին հետ մինակ մնան, հակառակ բիւրէի պէս աչքաբաց ցատկուտութիւն, չորս մէթը հեռու կը նստի, և օրուան գրականութեան վրայ կը խօսի :

Շատ անուշ է վայելել Գառն-գիւղցի երիտասարդը նշանածութեան վիճակին մէջ, աչքուպային մօրուքը թոթուելէն շարաթ մը վերջ, ան չիք երիտասարդը, ձեռքի շանթայով, տունէն սալամուստ պանիր, սէօյիւշ և թաղէ սօխ կը տանի գործին, էքօնօմիլի համար :

ԼԻԼԱ

Ա.Զ.ԲԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շուիլ եւ աղամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կարասիներ կոկիլ ամէն կերպով, առանց քակկիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր եւ, աղջկանդ օծիւր կը մտածես՝ դիմէ՛.

Օրիորդ եւ, շիք և աման հագուիլ կուզես՝ դիմէ .

Երիտասարդ եւ և շիքը կը սիրես՝ դիմէ.

Տարեց եւ և ցուրտէն պատապարտել կուզես՝ դիմէ .

Տղաներ ունիս որոնց պիտոյք զանկ կը ծածկեն՝ դիմէ

Անտանոցու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ

Եկա՛յ Կաղանդ, է նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ.

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուստ ես՝ դիմէ

Ձեռքդ պարտաւ ծամբայ բալել չես սիրել՝ դիմէ.

Կուզես տունդ կոկիլ ճաշարուոր կարասիներով՝ դիմէ

Առաջնակարգ և տոկուն գոլպաներու պէտք ունիս՝ դիմէ

Կուզես շիք, ճաշ սիրուոր և բաւ տեսակ փողկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզես ասից ցզուրի հագուիլ, շքուրի,

պճնուիլ

դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, Գուլուսմէլար փողոց թիւ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի, ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի, ժամացոյցներու, չլթաներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւս թին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը չարաթական վճարմամբ .

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան, հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախուած և անվնաս մնացած միմիայն աղամանդեայ գոհարեղէններէն ալ հարիւրին 15 զեղչով ետ կ'առնուին :

ՍՍ.ԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

28 - 30

ՄԱՍԻԿԻՍ ՏՈՊՐԱԿԷՆ

== Համակրուքիւնը կրնայ սիւսերը միացնել, նա'ւ հաստատել սիրոյ կամ բարեկամութեան կապերը :

== Պերնանով հագուելը միշտ վնասակար է գեղանի անձերու :

== Պարկեօս կիւն մը հագուեսեն կը ճանշուի :

== Ինչպէս վարդը՝ նոյնպէս կիւնեռուն սերը, գեղեցիկ օղին պէս շուտով մը կանցնի : (Մեր վտղսցեն ալ *ճիշտն* կանցնի : Ծ. Խ) :

== Խոնքեմ եւ գեղանի աղջիկ մը՝ գանձ մը կ'արժէ :

== Այնպիսի կիւներ կան, որոնք իրենց բարեկամները խաղի բուրբի պէս կը համբեմ :

== Ամօթխածութիւնը, առաքինութեան ամենեւնի մօտ ազգականն է :

== Վիւթը բոպեները կը համբէ, իսկ երջանկութիւնը սարիներ կը մոռցնէ :

== Սերը կանխիկ դրամ է, բռնաւ մը երբ սեր ունի, լեղանաւորէն աւելի հաբուս է :

== Կրքութիւնը նսնապարհի լաւագոյն պազարն է :

== Խոնարհութիւնը երբեմն հպարտութեան խորամանկութիւնն է :

== Երջանկութեան յարգը կը ճանշանք բռնաւորութեան մէջ, իսկ հարստութեան յարգը աղքատութեան աշենն :

== Աղամանդեայ գետի մը մէջ շատ մը կիւներու պատուոյն խղիւղելը տեսնուած է :

== Աջ ձեռնով գրուած ամեն գրեքը զանազան են, իսկ ձախ ձեռնով գրուածները իւրաքանչիւր կը նմանին :

== Սերը կանցնի, իսկ բարեկամութիւնը միշտ կը մնայ. նուազ կամ յաւեօս երկարաշէտ մնալէն վերջը :

== Դեղեցիկ կանայք եւլու անգամ կը մեռնին :

== Մարդս աւելի կը սիրէ իր անձին վրայ գէօ խօսիլ, քան քի բնաւ չխօսիլ :

== Մարդ համակրութիւն չունենաւ այն առաքինութեանց վրայ, որոնցմէ օգուտ չը քաղէր :

== Խեղացի մարդերու մը ընկերութիւնը

բողոք եւ աղուր կիւներու ակումբը յանախելը յիմարութիւնն է :

== Նորահաս օրիորդները կը կարծեն քի կարգուած մարդիկ իրենց կիւները կը գգուեն անդալար :

== Դեղեցիկութիւնը անուշ հոտերու կը նմանի, որ շատ քիչ տեսողութիւն ունի :

== Քիչ մը վստահեալ անոր՝ որ ամեն բան կը գովէ, աւելի քիչ այն մարդուն՝ որ ամեն բան կը բնադատէ, իսկ մի վստահիւր անոր՝ որ ամեն բանի անտարբէր է :

== Բնականական գաղտնիք բու գերիդ է, միջոցեւ ուրիշի չես քսած, բայց երբ մի անգամ քսես, քեզի տես կ'ըլլայ :

== Բնականական մեծագոյն դժբաղդութիւնը՝ վշտաց հանդուրժել չգիտնալն է :

== Մրցումը՝ վաճառականութեան կեանքն է :

== Համեստութիւնը, պահապան է առաքինութեան մէջ ապրողին :

== Համբերութիւնը վեհանձն բարեկամ մ'է, որ մեզ հետ կը կրէ մեր նեղութեանց բեռը :

== Շողտաբոլորութիւնը որոգայք մ'է, ուր ամսիսներ միայն կը բռնուին :

== Երեւ տեսակ տգիտութիւն կայ, բան մը չգիտնալ, գիտցածը լաւ չգործածել, իրեն պէտք եղածեն տարբեր բաներ գիտնալ :

Իզմիս

Ա. ԿՏԱԻՃԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Դոհուլեանք իրադեկ աղբիւրէ կիմանանք թէ, Պանարմայի Առաջ. Փոխ. Դեր. Տ. Թաթաւ վարդապետին Դոհ. եայի Առաջնորդութեան համար գիմում եղած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր, տեղացի ժողովրդեան սիրալիր հրաւերով և փառաքովը :

Դեր. Առաջնորդը իր տնաջառ և ուղղամիտ բնոյթովը սիրուած դէմք մըն է արդէն կղերական դասուն և ժողովուրդին կողմէ :

Խմբադրութիւն յաջողութիւն կը մաղթէ իրեն նորընտրելի կրօնական պաշտօնին մէջ :

ՓԱՄԱՆՈՒՄ

Նախընթաց շարժու մայրաքաղաքս ժամանեց Բաշիզէն Արշակ էֆ. Սուրէնեան, որ իր Ատամնաբուժական COURSE-ը յաջողապէս աւարտելէ ետք, պիտի հաստատուի Պոլիս: Սուրէնեան էֆէնտի իր Բաշիզ գտնուած միջոցին իր բոլոր բրօֆէսէօրներուն համակրութիւնը զըրուած է իր արտադրող յաջողութեանը համար: Համակրելի ատամնաբոյժը զըրելթէ տարիէ մը ի վեր իր արհեստը ի գործ կը դնէր արդէն Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ, և կործ առեկառն մը մէջ նախանձելի զիրք մը զրուած էր հոն:

Խմբագրութիւնս՝ հաճոյքով արձա- նագրելով իր ազգակցին յաջողութիւնը, իր շնորհաւորութիւնները կը փոխայ յայտնել անոր, իր Պոլիս դարձին առի- թով, ուր ևս, տարակոյս չկայ թէ, պի- տի փնտռել իրր ճարտար ատամնաբոյժ:


ՅԳՅԵԼՈՆԵ

Ներգեցողին ձայնը խանդոս դիւրական Լեցուց սիւսքս նոր իղծերով ի մի բան, որուն յուզիչ տեսերն իսկոյն իմ հոգիս: Հրեմուեցուցին պահ մը բերկրանով անցին:

Թաւ խաղերը սիրեցի մը եջ առ եջ Փոխանցուեցան նուրբ ծալներուն արհիւ մէջ, Հոն՝ բըրբռալով վայրիկ մըն ալ մըստոյլ, Ներքնցեցին եւ ինձ հեզիս սէր եւ կոյս:

Ու սիրեցի յայնժամ կեանքս ես անմեղ Ու հանդիման ունի իր մէջ ամեն հեղ. Անի կուտայ ո՛հ, բաղձ սեմներ սիրական, Նւ լոկ իրմով սիրոյ ցաւեր մեղմանա՛ն:

ԱՐՇԱՒ. Գ. ԻՍՊԷՂԵՐԵՍՆ



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԷՐԶՐՈՒՄ — Վահրամ Լ.Ֆ. Տիգրանեան — Սաացանք 1 Օսմ. ոսկին և ձեր հաշիւը փա- կեցինք ձեր գրածին համեմատ:

ԻԶՄԻՏ — Դորձակալութիւն — Սաացանք ձեր զրկած 225 զրուշը, և ձեր հաշուոյն ան- ցուցինք:

ՊՐՈԲԱ — Սարգեան Լ.Ֆ. — Սաացանք 1 Օսմ. ոսկի և ձեր հաշիւը փակեցինք:

ՆԵՋՆԿԱՅ — Հմայեակ Լ.Ֆ. Լաճիկեան — Հոս ձեր ցոյց տուած սեղանաւորը չուզեց վճարել, առարկելով թէ՛ մասնաւոր չէք չունինք ձեռքերնիս, աւելի լաւ է ուղղակի մեզի զրկէք զրամը քան թէ 1/2 ոսկիի համար պանքայի չէք փնտռող բժանդիր մարդոց:

ՈՕՏՈՍԹՈՅ — Դորձակալութիւն — Ձեր խօստման համեմատ, Յւնիս 1 էն ի վեր կոպտանք մեր հաշիւներուն, չեմ գիտեր թէ այս ամիսն ալ պիտի անցընենք:

Միւս մեր բաժանորդներուն յարգանքը բարեւելով հաշիւներուն առաքումը կը խնդրենք:

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի եւ Պոլիսի
համալսարաններին

Ամէն անոնք, որոնք կուզեն թիջ ժամա- նակաւսն մեջ, խիստ դիւրաւաւեցելի պայ- մաններով հիմնովին սովորել Գերմաներէն լե- ջուն՝ ինչպէս նաեւ Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՆՔԻԻ

պէտք է գիտեն Պանջը-լալու Բալուզաի վա- ճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրաւսանողութիւնները գառա- խօսութեան առիթիւ:

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»-Ի ԹԵՐԹՈՆԻ 19

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԵՉ

Մ. Սէնթեղ հարցւոյ Մեծ-ձերութիւն-պա-
րոնին .

— Դուք միշտ անցիւթ կ'ապրիք : Եր-
կիրներու ընտելիչներուն մէջ զէ՜հ կա՞ր :

— Ինչ պիտի ըլլայ երբ մէկ երկիր մը
կայ միայն առանց բաժանման , առանց ու-
րոշ վարչութեան և այս երկիրը աշխարհու է
ուր մէկ ցեղ միայն կը ընտելի : Բայց ամէն
ատեն մի՛ կարծէք որ այսպէս եղած է :
Մարդկութիւնը ի բնէ աւելի չար ըլլալով
քան բարի , հակառակութեան սոսկալի դա-
սեր և կամ երկաթեայ ճնշում մը հարկ ե-
ղաւ ներկայ յարգական կեանքը ձեռք բե-
րելու համար : Հազիւ քանի մը հազար տա-
րի առաջ , հինգ հազար տարի ըսենք , թէ և
աշխարհի վրայ մէկ ցեղ կար , բայց զանա-
զան մասերու բաժնուած էին որոնք իրարմէ
անջատ կուգէին իրենց ընտելալարերը ա-
րածել ի վնաս դրացիին , քանի որ հողը
ո և է մէկուն սեփականութիւնը չէր բացար-
ձակ : Մեր նախնիք բանակներ ալ ունէին :

— Ինչպէ՞ս , ընդմիջեց Մ. Սէնթեղ , այդ
տիկնորական խաղաղութիւնը 5000 տարի է
որ դոյսութիւն ունի , ուրեմն անկից առաջ
մարդիկ դեռ իրար կը շարունակէին յոշոտել :

— Ոչ : Իրար չէին ջնջեր , մեծ ֆեոտներ
չէին հասցներ , այլ մէկ հողի միայն կը
զոհուէր : Ամէն երկրի մէջ բնակիչներ կա-
րին 200 , 500 կամ 1000 հողիւնոց , ընտիր
և քաջ կամաւ որոնք որոնք կու խոտէին սպան-
նել այն անձը որ երկու երկիրներու միջեւ
պատերազմի պատճառ կուտայ : Ահա՛ այս
միջոցով միայն կարելի եղած է սանձել
մարդկային կարողութիւնը , քանի որ չա-
րիքին դործողները նախ զո՞հ կ'երթային :
Այս վիճակը անեց չորս-հինգ սերունդ ,
մինչև այն օրը որ միացումը կատարեալ

կուլ լսլոր ցեղերուն՝ չինական ցեղին մէջ
կորսուելու չնորհիւ : Գալով անհատական
վշտերուն , հոն սկզբունքով դործուեցաւ :
Պէտք չէ ընել ուրիշին այն բանը զոր չես
ուզեր որ քեզի ընեն , այս սկզբունքը և
մանուաւդ խիստ օրէնսդրութիւն մը , որ
մահուան պատիժ կը տրամադրէր , ապահո-
վեցին անհատներու բարեգութիւնը . . .

Մեծ-ձերութիւն-պարոնը յանկարծ խօսքը
դարձուց .

— Տեսէք , Արեւելեան Չինաստանը :

Եւ ցոյց տուաւ Մ. Սէնթեղի այն երկիրը
որ դոյսացած էր Խաղաղական ուղիւնոսին
վրայ փուստի ժայռերէ : Հոն բնակողներէն
ոչ մէկը կը յիշէր թէ ժամանակաւ ծով էր
այն և թէ վերջին ժամանակներու դործ էր
յաւաքի վերածուիլը : Ոչ մէկ կողմ բուստի
հեռք կար , հողը սեւադոյն միօրինակ էր ա-
մէ՛ս կողմ : Նոյն տանիքով սուները , նոյն
ծաղիկները ինչ որ կային ուրիշ տեղեր և
գետակներ որոնք օձոլրտ կը կարատէին ա-
մէն կողմէ կորսուելով միջերկրականներուն
մէջ որոնց ալիքները կը ցոլցային արեւին
տակ : Հեռուէն հեռու կը միայն քանի մը
հրաբուխներ որք ոչ շարունակական աշխա-
տութեան մը ներկայութիւնը կը մատնէին :

— Աւելի կամայ , Մեծ-ձերութիւն-պարոն ,
աւելի կամայ , կազաչեմ վար իջնել կուզեմ ,
երկիրը աւելի մօտէն քննելու :

Հազիւ այս դադափարը յայտնած էր ,
զգաց թէ երկնաքարի մը պէս գետին իջած
էր , սկսաւ կամայ կամայ ալ ու ձախ տա-
տանիլ անցնելով կամայօրէն լայն շրջագիծի
մը եզերքէն որ երկար տոնէ պալած լա-
վանքով ծածկուած էր : Մ. Սէնթեղ ան-
տարակոյս ճանչցաւ ժամանակաւ պայթած
աւեր հրաբուխը : Հոն հողը իր տափակ մի-

օրինակութիւնը չունէր : Ամէն կողմ բուռն ցնցումներու հետքեր , յաջորդական բարձրացումներ և սոսկալի քայքայումներ կային , լավաներ և ծուխեր կը ժայթքէին : Մ. Սէնթէզ, առանց վախճալու թէ ի չարն կը դործածէ իր ընկերներուն հաճոյակատարութիւնը կը շարունակէր իր խուզարկութիւնները լավաներուն մէջ : Յանկարծ անանկ ճիշդ մը արձակեց որ Ուղեղայինները չկրցան ցաւազին դող մը զսպել , այնքան ազդեալ էր իրենց փափկակալմութիւնը : Մ. Սէնթէզ սակայն առանց նկատի առնելու անոնց այս յուզումը , մասնաւոր ըրաւ գլանաձե բուռն զանգուած մը , լավայի ժայռի մը վրայ , թեթեւադէս հակած Բիլլայի ծուռ աշտարակին ձեւով :

— Հոն , հոն . . . կը գոչէր եւրոպացի գիտնականը ինքզինքն ելած , այնպէս որ յիմարացած կարծեցին զայն միւսները :

Մօտեցան զանգուածին . Մ. Սէնթէզ սկսաւ մեծաքայլ քայլել տենդահարի մը պէս , չափալիւծ նեղ մակերեսը որ հազիւ 25 մէթր արամազիմ ունէր . կը կենար , կը վերսկսէր քայլել , կը ծռէր , բուստի քանի մը կոորներ կը կտորէր , կը քննէր զանոնք և կը ննտեր : Յետոյ լարձրաձայն սկսաւ մեռախօսել :

— Այս մնացորդը , այս զանգուածը դորանգէտները , առաջին տնգամ դուք իսկ , պիտի վերագրէք բնութեան , մեռած բուստերու դարձուոր իրերախառնութենէն առաջ եկած այս ժայռը ի՞մ դործն է . . . : Հոն էր ինքնազական Ուկրաինոսը իր կանանց ջուրերով և ես մարդկային մաքին ամենէն բարձր կարողութեամբ այս աղագայ չրջափոխութիւնները կը գննէի , և կը պարծենայի արդիւնքովը երբ տնիծեալ հրաբուխը ծագեցաւ որ խորտակեց նաեւ իմ գործն և խեղդեց դատողութիւնս . . . : Բայց ի՞նչ կըսեմ : Խեղճ կորսնցուցի , իմ այդ մեծ գործն մեռած էր . . . : Տասը հազար տարի քնացած եմ իրա՛ւ . . . : Արդեօք սիրականներէս ետք ես դեռ կ'ապրե՞մ . . . : Չեմ արթննար արդեօք և փախչիլ զիս ընկճող սա անուշիկ ցնորքէն . . . : Անհա՛ , աղջիկս , չպիտի տեսնեմ քու շնորհալի դէմքը որ իմ վրաս հակած է սպասելով դէպի կհանք վերագարծիս , լսել քու ձայնդ

որ ահանջիս մրմնջէր սիրտս բարախեցնող խօսքդ « հայրիկ » : . . . Բայց ո՛չ , միայն բոցերը կը տեսնեմ որոնք զիս կը կուրացնեն և կը լսեմ որոտումներ որոնք զիս կը խուցընեն : Ես միշտ եմ և անիծեա՛լ . լաւ ուրեմն , հեռու չպիտի երթամ : Քանի որ դուրեք ետք անըմբռնելի զիպուածը հոս առաջնորդեց ինծի և քանի որ այս հրաբուխը որ իմ կհանքի գործն ընկղուզած էր , այժմ այդ բուռն զանգուածը բերաւ դրաւ չորացած ուկրաինոսին վրայ , այս բեկորը պիտի ըլլայ իմ գերեզմանս ինծի արժանի՛ գերեզմանը : Հոն պէտք է կորսուին , բնութեան մէջ քմահաճաքովը , իմ ցեղիս վերջին մարդուն բոլոր խորհուրդները և երազները : Քնանա՛լ , քնանա՛լ կուզեմ յաւէ՛տ և ա՛լ չարթննալ . . . :

Այս բառերը արտասանած տեսն աչքերը յառեցան ապակեցած ժայռի մը վրայ ուր հասարակածի արեւը կը շողշողար : Անոր աչքերը մնացին այդ տնջէ՛լ և կուրացնող լոյսին վրայ , վայրագ ուրախութիւնովը յուսահատի մը որ կը նայի զինք փրկող զաւոյնին կամ զեղին : Քանի մը վայրկեան հազիւ անցած , մաքնիսականութիւնը կատարուած էր կայծակի արագութեամբ : Այն տեսն Մ. Սէնթէզ կամայ մը ծռեցաւ ետին , կռնակի վրայ ինկաւ , ժայռին ծռած յատակաձեւին երեսը , և փռուած մնաց այնպէս , աչքերը միշտ յառած լուսափաղի ճառագայթներուն , մարմինը փայտացած , առանց ո և է չարժման , առանց ո և է սրբափանքի :

Վ Ե Ր Ջ

Արտագրուեալ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԿՐԹՏԱՆ

Պատ. Ալի Գաւաթի Թ. 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՅՐԱԵՂՔՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հարամ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբ շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձեռնուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց քէջրոհներու և
տղայոց չիք և գիմացկուն փօքիւններու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .

աակՍրկո Վթիւն չկայ, թիւը 2 զրչ է.

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

39—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, մլուկ-
ները կը ջնջեն և չն. և չն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ .

Ներաի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց գիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է առջն գնեռով իր վը-
րայ առնել ամէն դործ, թէ ներկն և
թէ գործառնողէի մէջն ըլլալով :

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պագըր-
ճըլար թիւ 26, Գ. Անէմեսան : — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
գիւրամատչելի պայմաններով :


4—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐԱՆ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԲՆՏԻՐ ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԼՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահանջարկ, Ճեղք-Պեյ խան, քիւ 10



ԱՆՏԵԼԻՊ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒՍԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԵՏՈՅԻՏ

ՄԱՍՆԱԲՈՐԱԲՈՐ

Պոստիլյոնի և Դյակոնի Կրամոֆոնի
և Երկկողմ Բլոգներու, Կեդրոնա-
տեղի Պահանջարկ, Հաճի Պեքի
Էմենտի կից, Եստրադ խանի տակ
քիւ 2: Մասնաձևի Պահանջարկ
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չաճած համար
ը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
զրոյթեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամոֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլոգներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Կաւաններէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: